# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

*/հայտերի գնահատման և հաստատման նիստի/*

*«ՄՇ-ԳՀԱՊՁԲ-19/28»* ծածկագրով գնանշման հարցման գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գ. Մայիսյան

18 հոկտեմբերի 2019թ
ժամը 12:00

*ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում*

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Արտաշես Դրմեյան /Մարմաշենի համայնքի ղեկավարի տեղակալ/

Հանձնաժողովի Անդամներ՝ Սենիկ Մանուկյան / Մարմաշենի համայնքի ղեկավարի օգնական/

Արտաշ Եղիկյան /Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Մամեդ Սալոյան /Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից/

Հանձնաժողովի քարտուղար՝ Սաթենիկ Մաղաքյան */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից/*

### *1. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին*

1. *Ընդունել ի գիտություն, որ*

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.2 Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունները կազմում է՝ 6 800 569 ՀՀ դրամ
- հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

- հայտը ներկայացնելուն նախորդ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

*Մասնակցին ուղարկվել է ծանուցում, որ անհրաժեշտ է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, մասնակցի կողմից չի շտկվել անհամապատասխանությունը:*

***Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0***

2. ***Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցի որոշման մասին***

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց՝ մերժել մասնակցի հայտը

| Հ/Հ | Մասնակիցը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| | | |
| 1 | «Ռուստամ Սարգսյան» Ա/Ձ | անբավարար |

Հետևաբար կիառվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետով, և 45-րդ կետով սահմանված պահանջները՝ «Ռուստամ Սարգսյան» Ա/Ձ-ի ներկայացրած հայտը մերժվում է, 5 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալներն ուղարկվում է լիազորված մարմին:

Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ-0***

Հանձնաժողովի Նախագահ՝ ____________ Արտաշես Դրմեյան
/ստորագրություն/

Հանձնաժողովի անդամ՝ ____________ Սենիկ Մանուկյան
/ստորագրություն/

Հանձնաժողովի անդամ՝ ____________ Արտաշ Եղիկյան
/ստորագրություն/

Հանձնաժողովի Անդամ՝ ____________ Մամեդ Սալոյան
/ստորագրություն/

Հանձնաժողովի Քարտուղար՝ ____________ Սաթենիկ Մաղաքյան
/ստորագրություն/